ՀՏԴ : 93(=919.81)(479.22) + 070(479.25)

Doi:10.54503/0135-0536-2025.2-51

ՁԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՁԱՎԱԽՔ» ԱՄՍԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ (1990-ական թվականների սկիզբ)*

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Վրաստան, ջավախահայություն, «Ջավախք» ժողովրդական շարժում, «Ջավախք» ամսաթերթ, աջակցություն Արցախին:

Ամփոփում

«Ջավախք» ժողովրդական շարժման հիմնադրած «Ջավախք» ամսաթերթը կարճ ու երկարատև ընդմիջումներով հրատարակվել է Ախալքալաքում 1990–1998 թվականներին: Չնայած անկանոն հաճախականությամբ և սահմանափակ տպաքանակով լույս տեսնելու իրողությանը՝ ԽՍՀՄ փլուզման և Վրաստանի անկախության առաջին տարիներին «Ջավախք»-ը նոր խոսքի ու մտքի տարածման հարթակ էր ջավախահայ հասարակական-քաղաքական կյանքում: Ամսաթերթում տեղ են գտել ինչպես «Ջավախք» ժողովրդական շարժման գործունեությանն ու բարձրացված հարցերին, այնպես էլ ջավախահայության՝ զարթոնք ապրող հասարակական-քաղաքական, ազգային, կրթամշակութային, հոգևոր կյանքին, Ջավախքի պատմության ուսանելի դրվագներին, մեծերի կյանքին ու գործունեությանը, Վրաստանի իշխանությունների ընդունած օրենքներին ու որոշումներին, հայ-վրացական առնչություններին ու կնճռոտ հարցերին, սոցիալական դժվարություններին, բարեգործությանը, եկեղեցաշինությանը վերաբերող հոդվածներ ու հրապարակումներ: Արժեքավոր են նաև ջավախահայության՝ Արցախյան գոյապայքարին ցուցաբերած օժանդակությունը ներկայացնող փաստառատ հրապարակումները: Անդրադարձ ենք կատարել «Ջավախք» ամսաթերթի 1990–1994 թթ. լույս տեսած համարներին:

Նախաբան

ԽՍՀՄ փլուզման նախօրյակին՝ 1980-ական թվականների վերջին, ինչպես նաև փլուզման փուլում և հետխորհրդային առաջին տարիներին Ջավախքում ստեղծված հայկական կազմակերպությունների միջոցով փորձ արվեց համակարգել երկրամասի հասարակական-քաղաքական կյանքը: Ծնունդ առավ «Ջավախք» կոմիտե, «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերություն», «Ջավախք» ժողովրդական շարժում անվանումներով մի

* *Ներկայացվել է 15. V. 2025 թ., գրախոսվել է 24. VI. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

կազմակերպություն, որը հետագայում (մինչ 1990-ական թվականների կեսերը) էական դերակատարություն էր ունենալու Ջավախքի ներքաղաքական կյանքում[1]: Հավելենք, որ ԽՍՀՄ ողջ տարածքում իրականացվող «վերակառուցման» քաղաքականության հետ կապված՝ շարժման սկզբնական փուլում (մինչև 1990 թ. հունվարի 27-ին տեղի ունեցած առաջին կոնֆերանսը), այն կոչվել է «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերություն» անունով և գործել որպես կամավոր հասարակական կազմակերպություն[2]: Առաջին կոնֆերանսի ընթացքում մեծ տեղ հատկացվեց Արցախին տրամադրվող օգնություններին վերաբերող ծրագրերի կազմմանը: Շարժման առաջնորդները կոչով դիմում էին շրջանի հասարակության լայն շերտերին՝ համախմբվելու շարժման շուրջ, միասնական պայքարելու առկա ազգային-քաղաքական, կրթամշակութային և սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրների լուծման համար[3]:

«Ջավախք» ամսաթերթի հիմնումը

Կազմակերպության առաջին կոնֆերանսում ընդունված բանաձևում, ի թիվս մի շարք որոշումների, կարևոր է համարվել նաև «Ախալքալաքում ստեղծելու «Ջավախք» կազմակերպության գրավոր օրգան «Ջավախք» ամսաթերթ»[4]: 1990 թ. մայիսի 19-ի հերթական նիստով «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության նախագահությունը որոշում կայացրեց «հիմնել «Ջավախք» կազմակերպության տպագիր օրգան և այն անվանակոչել «Ջավախք»: Ամսաթերթի խմբագիր հաստատվեց խորհրդի անդամ, Ջավախքի անվանի մտավորական Մկրտիչ Խաչատրյանը»[5]:

1994 թ. օգոստոսին լույս տեսած համարից (3-րդ) սկսած՝ Մ. Խաչատրյանի անունը, իբրև խմբագրի, թերթում այլևս չի նշվում: Փոխարենը նշվում է «Խմբագրական մարմին» հավաքական անունը: Թերթին թղթակցել են ինչպես

---

[1] *1988 թ. փետրվարի վերջին՝ Ղարաբաղյան շարժման սկզբնավորումից մեկ շաբաթ անց, Ախալքալաքում՝ հասարակական գործիչ Հ. Մանուկյանի տանը, հինգ անձանց կողմից (Սամվել Պետրոսյան, Հակոբ Մանուկյան, Գևորգ Համոյան, Միքայել Թադևոսյան և Վարոս Մահտեսյան) կյանքի կոչվեց «Ջավախք» կոմիտեն (տե՛ս* Грузия, Самцхе-Джавахетия и «тюркское кольцо» вокруг Армении, 12. 01. 2004. – https://regnum.ru/article/202173*): Հետագայում «Ջավախք» ժողովրդական շարժման ձևով ընդլայնված կազմակերպության հիմնադիրներ, ըստ մեկ այլ աղբյուրի, հանդիսացել են Ս. Պետրոսյանը, Հակոբ Ավետիսյանը, Վ. Մահտեսյանը և Հ. Մանուկյանը [տե՛ս «Մարտիկ» (Երևան), 2001, սեպտեմբեր, թիվ 37]:*

[2] *Տե՛ս Կանոնադրություն «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերության», ընդունված «Վերակառուցում ժողովրդական շարժում» ընկերության կողմից 01 հունիսի, 1989 թ., գրանցված Ախալքալաքի շրջխորհրդի գործկոմի առ 08. 09. 1989 թ. № 118 որոշմամբ (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):*

[3] *Տե՛ս «Ջավախք» ժողովրդական շարժման կոչը՝ ուղղված Ախալքալաքի շրջանի ողջ աշխատավորությանը, տնտեսությունների և կազմակերպությունների ղեկավարներին, դպրոցների տնօրեններին, բանվորներին ու կոլտնտեսականներին, մտավորականության բոլոր ներկայացուցիչներին, 1991 թ., ք. Ախալքալաք (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):*

[4] *Տե՛ս Բանաձև «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության կոնֆերանսի (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):*

[5] *Տե՛ս Արձանագրություն № 3, 19. 05. 1990, ք. Ախալքալաք (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):*

Զավախքի հասարակական-քաղաքական գործիչները, այնպես էլ՝ անվանի մտավորականները, մանկավարժները, հասարակական կյանքում ակտիվություն ցուցաբերող, Զավախքի ճակատագրով, Զավախահայության հոգևոր, կրթամշակութային և սոցիալ-տնտեսական խնդիրներով մտահոգ մարդիկ:

Ամսաթերթի առաջին համարը լույս տեսավ 1990 թ. դեկտեմբերին: Այն պաշտոնապես կոչվում էր Ախալքալաքի շրջանի «Զավախք» ժողովրդական շարժում[6] կազմակերպության պաշտոնաթերթ, գինը՝ 30 կոպեկ: Ամսաթերթի տարբերանշանն էր՝ «Զավախք» անունը, Զ մեծատառը ջահի պատկերով, հիմքում՝ սուր, վերևում՝ Մեծ և Փոքր Մասիսները, մեջտեղում՝ խաչը: Տարբերանշանի վերևում՝ «Բռունցքվելն է հավերժությունը հայության» գրությամբ կարգախոսը: Ամսաթերթը տպագրվել է Վրաստանի Հանրապետության տպագիր խոսքի պետական կոմիտեի Ախալցխայի պոլիգրաֆ արտադրական միավորման Ախալքալաքի շրջանային տպարանում: Տպաքանակի մասին, ցավոք, տեղեկություններ չեն բերված: Մեր տեղեկություններով՝ այն եղել է սահմանափակ քանակով:

Ամսաթերթը բաղկացած էր 4 էջից: Ծավալը փոփոխության է ենթարկվել 4-րդ (սեպտեմբեր, 1994, տպագրվել է 6 էջի ծավալով), 18-րդ (փետրվար, 1997 թ., տպագրվել է 2 էջ-ով) և 19-րդ (օգոստոս, 1998 թ., տպագրվել է 2 էջ ծավալով) համարներում:

Առաջին համարի լույս տեսնելուց հետո թերթը շուրջ երեք տարի լույս չի տեսել: Պատճառը, ամենայն հավանականությամբ, Վրաստանում առկա տնտեսական, էներգետիկ ճգնաժամն էր, վրաց-աբխազական՝ ավելի քան

[6] *Ամսաթերթում կազմակերպության անվանումը գրված է «Զավախք ժողովրդական շարժում» ձևով: Ամսաթերթի նյութերում և կազմակերպության այլ փաստաթղթերում օգտագործվում է նաև ««Զավախք» ժողովրդական շարժում» և «Զավախք» ժողովրդական շարժում ձևերը: Հոդվածում օգտագործել ենք «Զավախք» ժողովրդական շարժում ձևը:*

մեկամյա արյունալի պատերազմը, երկրում տիրող քաոսն ու ամենաթողությունը: «Ջավախք»-ը հաջորդիվ լույս տեսավ 1993 թ. սեպտեմբերին՝ նույն տարբերանշանով, կարգախոսով ու ձևավորմամբ: Բացառություն էր միայն այն, որ ամսաթերթը ներկայացվում էր ոչ թե Ախալքալաքի շրջանի «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության պաշտոնաթերթ, այլ, իբր, նույն շրջանի «Արշալույս» կազմակերպության պաշտոնաթերթ[7]:

«Ջավախք» ամսաթերթը 1995 թ. փետրվարից և մինչ նույն թվականի սեպտեմբերը (15-րդ համարը) հրատարակվեց կանոնավոր՝ ամենամսյա հաճախականությամբ: 1996 թ. լույս տեսավ «Ջավախք»-ի երկու[8], 1997 թ.՝ մեկ, 1998 թ.՝ երկու համար: Այսպիսով, իբրև «Ջավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթ՝ ամսաթերթն անկանոն հրատարակվեց մինչև 1998 թ. օգոստոս, ընդհանուր թվով 20 համար:

«Ջավախք»-ի անդրանիկ համարը. ամսաթերթի տպագրության ընդհատումը

«Ջավախք»-ի առաջին համարում «Ջավախք» ժողովրդական շարժման հիմնադրման և նպատակների մասին ընդարձակ հոդված-խմբագրականում խոսվում է, թե ինչու է անհրաժեշտ ունենալ նաև տպագիր օրգան. ««Ջավախք» ժողովրդական շարժումը շրջանի ամենախոշոր հասարակական կազմակերպությունն է, որի կազմում ընդգրկված են շրջանի աշխատավորների ամենատարբեր շերտեր՝ բանվոր ու գյուղացի, մտավորականություն ու գյուղմասնագետների ներկայացուցիչներ: «Ջավախքը» միավորում է 61 սկզբնական կազմակերպություն, որոնք փաստորեն շրջանի սոցիալ-քաղաքական, տնտեսական, բնագավառներում ներգործուն հզոր ուժ են հանդիսանում: Սակայն, դժբախտաբար, այդ վիթխարի ուժը դեռևս պոտենցիալ վիճակի մեջ է: Հասկանալի է, որ հրամայական պահանջ է այն մեր շահերին ծառայեցնելու համար համապատասխան խթանիչ ստեղծել, որը «Ջավախք» կազմակերպության գործունեությունը աշխատավորների լայն մասսաների գիտակցությանը, սրտին ու հոգուն հասանելի դարձնի: Այդ հզոր ուժը գրավոր օրգանի ստեղծումն է: Ահավասիկ այդ պարբերականի անդրանիկ համարը: Ասենք, որ դեռևս դարասկզբին մեր գավառում եղել է «Ջավախք» շաբաթաթերթը[9]: Այդ պարբերականը պատվով

---

[7] Նշենք, որ «Ջավախք»-ի հաջորդ համարը ևս, որը լույս տեսավ մոտ մեկ տարի անց՝ 1994 թ. օգոստոսին, հրատարակվեց իբրև Ախալքալաքի շրջանի «Արշալույս» կազմակերպության պաշտոնաթերթ: Դրան հաջորդող համարը, որը լույս տեսավ ավելի քան մեկ ամիս անց՝ 1994 թ. սեպտեմբերին, վերստին ներկայացավ որպես Ախալքալաքի շրջանի «Ջավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթ:

[8] Ցավոք, ջավախահայ հասարակական-քաղաքական գործիչների անձնական պահոցներում և այլուր մեր փնտրտուքներն իզուր անցան, քանզի չկարողացանք ձեռք բերել «Ջավախք»-ի 17-րդ համարը: «Ջավախք» ամսաթերթը չի փոխանցվել նաև ՀՀ գրադարաններին, գիտահետազոտական կենտրոններին և այլն: Արդյունքում, թերթի որևէ համար գտնել հնարավոր չէ նշված հաստատություններում: Հետևաբար, ենթադրում ենք, որ տվյալ համարը լույս է տեսել 1996-ին, և, քանի որ հաջորդ՝ 18-րդ համարը հրատարակվել է 1997 թ. փետրվարին, չի բացառվում, որ խնդրո առարկա 17-րդ համարը տպագրված լինի նաև 1997 թ. հունվարին:

[9] Ախալքալաքի գավառում հրատարակված հայերեն առաջին պարբերականը՝ «Ջավախք» երկշաբաթաթերթը, հրատարակվել է 1913–1916 թթ.: Այն հիմնադրել է հրապարակախոս, հասարակական-մշակութային գործիչ, գրող ու թատերագիր

կատարեց իր առաքելությունը: Նորաստեղծ «Զավախք» պարբերականը փաստորեն իր նախորդի լավագույն ավանդույթների շարունակողը պետք է լինի՝ արդի պայմաններում արտահայտելով ժողովրդական շարժման վեհ նպատակները: Այն պայքարելու է ժողովուրդների բարեկամության և մասնավորապես հայերի ու վրացիների դարավոր եղբայրությունն ամրապնդելու համար»[10]:

Ամսաթերթի նույն համարում ««Զավախք» կազմակերպության պահանջը կյանքի հրամայականով» խորագրի տակ անդրադարձ է կատարվել Զավախքի հայկական դպրոցներում հայ ժողովրդի պատմության դասավանդման խնդրին, փաստել համապատասխան ծրագրի մշակման անհրաժեշտությունը, որպեսզի 8–9-րդ դասարաններում ֆակուլտատիվ առարկաների փոխարեն շաբաթական մեկ ժամ հատկացվի հայ ժողովրդի պատմության դասավանդմանը: Ամսաթերթում այդ խնդրին են անդրադառնում ամսաթերթի խմբագիր Մ. Խաչատրյանը և շրջանի անվանի մտավորական Երվանդ Շիրինյանը՝ «Մատաղ սերնդի հայեցի դաստիարակությունը՝ հրամայական պահանջ» խորագրով հոդվածում՝ փաստելով, որ 1990 թ. դրությամբ Ախալքալաքի շրջանում գործող 69 հանրակրթական և 2 պրոֆտեխնիկական ուսումնարանների՝ ավելի քան 14 հազար աշակերտների շուրջ 90 %-ը հայ մանուկներ էին, և վերջիններիս համար հայ ժողովրդի պատմության դասավանդումը պաշտոնապես ընդգրկված չէր պետական կրթական ծրագրերում: Հեղինակներն արդարացիորեն հույսեր չէին կապում Վրաստանի իշխանությունների հետ՝ նշելով, որ Հայկական ԽՍՀ լուսավորության նախարարությունը պետք է «հետևություն անի և առևտրական կազմակերպությունների միջոցով կամ այլ ուղիներով Զավախքի՝ Ախալքալաքի, Բոգդանովկայի, Ասպինձայի, Բորժոմի շրջանների[11] հայկական դպրոցների համար հատկացնի հայ ժողովրդի պատմության 10–12 հազար դասագիրք»[12]:

Զավախքում հայեցի դիմագծով սերունդ ունենալու խնդրին է նվիրված նաև Մ. Ադամյանի «Հարկավոր է փոխել դպրոցի պրոֆիլը» վերտառությամբ հոդվածը, որտեղ հեղինակն ավելորդ շռայլություն է համարում տվյալ փուլում (1990 թ.) Ախալքալաքում 2 ռուսական դպրոցը: Այնտեղ սովորող շուրջ 1600

Վարդան Շահպարոնյանը (տե՛ս Մ ա ղ ա լ յ ա ն. 1997, 81–85, Ս ա ր գ ս յ ա ն. 2009, 251–274):

[10] «Զավախք», № 1, դեկտեմբեր, 1990, էջ 1: Խմբագրության նպատակն էր «լրագիրը դարձնել ժողովրդի խոսափողը, ականջն ու աչքը, որպեսզի այն դառնա ... «Զավախք» կազմակերպության համար գաղափարախոսական աշխատանքի հզոր լծակ: ... Զավախք աշխարհի աշխատավորությունը պարտավոր է իր նպաստը բերել Վրաստանի սոցիալ-տնտեսական բարգավաճման գործում: Այս ասպարեզը մեր թերթի մշտական տեսադաշտում է գտնվելու: Եկեք խորապես գիտակցենք, որ մեր գավառի սոցիալ-տնտեսական, կուլտուր-մշակութային կյանքն իր ամբողջության մեջ պիտի արտացոլվի «Զավախք»-ում» («Զավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 1):

[11] 1989 թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ համապատասխանաբար 42,81 %-ով (23.469) և 28,51 %-ով (12.671) հայաբնակ Ախալցխայի ու Ծալկայի շրջանները ջավախահայ մտավորականների կողմից տվյալ հոդվածի միջոցով ներկայացված պահանջագրից դուրս թողնելը խոսում է այն մասին, որ «Զավախք» ժողովրդական շարժումը հայեցակարգային հողի վրա դեռևս չէր դրել սեփական քաղաքական ուղեգիծը, ինչը հետագայում ևս խիստ զգացնել տվեց իրեն՝ դառնալով ճախողումների հիմնական պատճառներից մեկը (այս մասին առավել հանգամանալից տե՛ս Ս ա ր գ ս ե ա ն. 2018, 487–508):

[12] «Զավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 2:

աշակերտ, որի 90%-ը կազմում են հայ մանուկները, ըստ հեղինակի, իրենց ազգային պատկանելության մասին ենթագիտակցական պատկերացում հազիվ ունեն[13]:

Ամսաթերթի անդրանիկ համարում հոդվածագիր Խ. Անիսոնյանն անդրադարձել է հայ-վրացական եղբայրությանն ու դարավոր բարեկամական կապերին խոչընդոտող երևույթներին ու «երկու ժողովուրդների ազգային շահերին անհարիր տրամադրություններին», այն է՝ Վրաստանի մամուլում տեղ գտած առանձին հրապարակումներ, հայերի էթնոձուլման խրախուսում, հայաշատ շրջաններում ոչ հայանպաստ կադրային քաղաքականություն և այլն: Հեղինակը հատուկ քննության է արժանացնում նաև Ախալցխայի Սբ Նշան եկեղեցու խնդիրը, որը, հակառակ հայերի ձգտմանը՝ վերաբացել հայ առաքելական եկեղեցին, «Ախալցխայի տեղական իշխանությունները ամեն կերպ խուսափում էին հայերի օրինական պահանջը կատարել»՝ այն վերջին տարիներին զանազան ապրանքների պահեստից վերածելով «բարեկամության» թանգարանի[14]:

««Ջավախքի» երախտավոր զավակները» խորագրի տակ ամսաթերթում տեղ գտած ուշագրավ հրապարակում է «Ջավախք» ժողովրդական շարժման խորհրդի նախագահ Իսահակ Աբրահամյանի «Վարդան Շահպարոնյան» վերնագրով հոդվածը՝ դարասկզբի «Ջավախք» շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչ, Ջավախքի հասարակական-մշակութային, տնտեսական կյանքի մեծ երախտավորի կյանքի և գործունեության մասին:

«Ջավախք» ժողովրդական շարժման հիմնադիրներից Հակոբ Մանուկյանի «Միասնական նպատակի համար» վերնագրով հոդվածում խոսվում է «Ջավախք» կազմակերպության մեկամյա գործունեության, կազմակերպության բարձրացրած հարցերի, առաջ քաշած ծրագրերի ու գաղափարների, կազմակերպության և Ախալքալաքի շրջանի խորհրդային կուսակցական, տնտեսական ու հասարակական կազմակերպությունների համագործակցության, համատեղ միջոցառումների ու ծրագրերի անհրաժեշտության մասին[15]:

«Ջավախք» ժողովրդական շարժման հիմնադիրներից, տվյալ ժամանակ կազմակերպության նախագահի տեղակալ Միքայել Թադևոսյանն էլ իր «Քրիստոսի պատվիրանն է՝ օգնել ընկածին ու կարիքավորին» վերտառությամբ հոդվածում խոսում է երիտասարդ կազմակերպության բարեգործական ծրագրերի մասին, որոնց առանցքում Ջավախահայության կողմից Արցախին ցուցաբերած օգնությունն էր: Ըստ հոդվածագրի՝ 1988 թ. մարտից երկրամասում ամենուր սկսվեց նյութական միջոցների հանգանակում, և շրջափակված Արցախին առաջիններից մեկն օգնության ձեռք մեկնեց Ջավախքը[16]:

Ամսաթերթի հիմնադրման և առաջին համարի լուս ընծայման առիթով բարեմաղթանքներ ու շնորհավորանքի նամակներ են հղել «Խորհրդային Վրաստան» թերթի խմբագրությունն ու Բոգդանովկայի շրջանի «Փարվանա» հասարակական կազմակերպությունը:

---

[13] «Ջավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 2:

[14] «Ջավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 2: Առ այսօր եկեղեցին չի վերադարձվել Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմին:

[15] «Ջավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 3:

[16] «Ջավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 4:

«Զավախք»-ի վերահրատարակությունը՝ եռամյա ընդմիջումից հետո

1993 թ. սեպտեմբերին վերստին լույս տեսած «Զավախք» ամսաթերթի «Մեր նպատակը» առաջնորդողը ստեղծված տնտեսական, սոցիալական ճգնաժամից դուրս գալու գործում կարևորում է լրատվամիջոցների դերը. ««Զավախք» ամսաթերթը նեղ իմաստով «Արշալույս» բարեգործական կազմակերպության պաշտոնաթերթն է, սակայն այն հավակնություն ունի լայնորեն լուսաբանելու շրջանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, որի նպատակը մեկն է՝ գործուն մասնակցություն ցուցաբերել շրջանը տնտեսական ճգնաժամից դուրս բերելու, աշխատավորներին համախմբելու, ազգերի բարեկամությունն ամրապնդելու, բարեգործություն ծավալելու ասպարեզում»[17]:

«Բարեգործությունը հայի ազգային բնավորությունն է» խորագրի տակ հոդվածագիր Վ. Գալստյանն անդրադարձել է ադրբեջանական ջարդերից, պատերազմի մեջ գտնվող Արցախից, Աբխազիայից մազապուրծ հայության՝ Զավախքում ապաստանած բեկորներին աջակցություն ցուցաբերելու հարցերին: Նշվում է, որ 1992 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին շուրջ 100 ընտանիք է ապաստանել Ախալքալաքի շրջանում, որտեղ ստեղծված փախստականների հատուկ հանձնաժողովի միջոցով շուրջ մեկ տարվա ընթացքում նրանց համար ոչ միայն բնակարաններ են հատկացվել, այլև ստացել են պետական նպաստ՝ ավելի քան 4,2 մլն վրացական կուպոն[18]:

Ամսաթերթի տվյալ համարում տեղ գտած մյուս հոդվածները հիմնականում առնչվում են ինչպես առանձին գյուղերի (Օրջա, Տուրցխ), այնպես էլ ընդհանուր շրջանին վերաբերող սոցիալ-տնտեսական (Ախալքալաքի պանրագործարանի ճակատագիրը), առողջապահական, էներգետիկ (Զավախքի ազգաբնակչությանը քարածխով ապահովելու հարցը), բնապահպանական (մասնավորապես Ախալքալաքի մերձակա Տավշանկա բլրի վրա զանգվածային ապօրինի ծառահատումները) և կենսական այլ հարցերին:

«Հուսանք և սպասենք» հրապարակումն անդրադառնում է Ախալքալաքի շրջանային վարչության ընդլայնված նիստին, որտեղ քննարկվել է նաև Հայաստանի հեռուստատեսային հաղորդումների խափանման և այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկման հարցը[19]: Հրապարակագիր Ջ. Ուզուն-

---

[17] «Զավախք», № 1, սեպտեմբեր, 1993, 1:

[18] «Զավախք», № 1, սեպտեմբեր, 1993, 1:

[19] «Զավախք», № 1, սեպտեմբեր, 1993, 3: Զավախահայությանը մտահոգող այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև մեկ տարի անց՝ 1994 թ. օգոստոսին լույս տեսած «Զավախք»-ում: «Պատրաստում են հեռուստահաղորդման էկրան» (հեղինակ՝ Ն. Տեփոյան) վերտառությամբ հրապարակմամբ հաղորդվում էր, որ Ախալքալաքի ճոպանուղիների սարքավորումների գործարանն իր միջոցներով պատրաստում է Հայաստանի հեռուստահաղորդումներն անդրադարձնող 50 մ² մակերեսով էկրան: Մեկ այլ՝ «Ստեղծվում է հիմնադրամ» վերնագրով ակնարկում (հեղինակ՝ Ս. Ղևենյան), հաղորդվում է, որ ավելի քան մեկ տարի է, ինչ Բոգդանովկայի շրջանի Սպասովկա գյուղի մոտակա բլրին տեղակայված հեռուստահայելիների վրայից պղնձյա մասերը, ցերեկային մարտկոցներն ու այլ սարքավորումները թալանելու պատճառով Զավախքում խա-

յանն իր «Մշակույթի կենտրոն» վերտառությամբ անդրադարձում ոգևորությամբ է խոսում Ախալքալաքի մշակույթի պալատում հայ մշակույթի կենտրոնի հիմնման մասին, որի նպատակն է Ջավախքի արվեստասեր հասարակությանը դաստիարակել ազգային մշակույթի ավանդույթներով. «Մեր շրջանի բնակավայրերի ակումբներին առընթեր գործող գեղարվեստական համույթները, ի դեմս մշակույթի կենտրոնի, կունենան արվեստի մի շարք բնագավառներում ինքնուս արտիստների կատարողական վարպետությունը բարձր ներկայացնելու դպրոց, այս ասպարեզում ծրագրվող միջոցառումներին ճիշտ ուղի ու մասնագիտական օգնություն տվող օջախ»:

Ջավախքի վաստակավոր մանկավարժներից ժողկրթբաժնի մեթոդիստ Վաչագան Ռստակյանի՝ «Դասավանդվում է հայոց պատմություն» վերտառությամբ հոդվածում քննարկվում է Ջավախքի դպրոցներում «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման անհրաժեշտությունն ու առկա խնդիրները: Հոդվածագիրը նշում է, որ թեպետ վերացել են առարկայի դասավանդման՝ խորհրդային շրջանում առկա արգելքները, և Վրաստանի լուսավորության նախարարության համաձայնությամբ հնարավորություն է ընձեռվել համաշխարհային ու Վրաստանի պատմությանը զուգընթաց ուսուցանել նաև հայ ժողովրդի պատմությունը, սակայն կուտակված եռամյա փորձը (1991–1993 թթ.), ըստ Վ. Ռստակյանի, շատ քիչ է: Առկա խնդիրների շարքում մանկավարժը նշում է, որ ծրագրերը վերջնականապես չեն ձևավորվել, չկան նոր դասագրքեր, կաբինետներ և մեթոդական անկյուններ, ուսումնանյութական համապատասխան բազա[20]:

Փաստենք, սակայն, խոսքը ոչ թե «Հայոց պատմություն» առարկայի դասավանդումը պետական կրթական ծրագրերի մեջ ընդգրկելու մասին էր, այլ խորհրդային շրջանում առկա որոշակի արգելքների բացակայության, ինչը հնարավորություն էր ընձեռում որոշ այլ և ֆակուլտատիվ դասաժամերի փոխարեն ներառել այդ առարկայի դասաժամեր: Իսկ բուն խնդիրը մնում էր չլուծված: Դա է վկայում «Ջավախք»-ի հաջորդ համարում (լույս է տեսել 1 տարի անց՝ 1994 թ. օգոստոսին) տեղ գտած բաց նամակը՝ ուղղված Ախալքալաքի շրջանի վարչությանը: Ջավախքի հայտնի գործիչներ՝ «Ջավախք» կրթամշակութային միության հանձնաժողովի նախագահ Իսահակ Աբրահամյանն ու նույն հանձնաժողովի գիտակրթական սեկցիայի նախագահ Երվանդ Շիրինյանը, բաց նամակով քննարկելով 1994–1995 թթ. ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին հարցը, մատնանշելով ուսուցիչների սոցիալական ծանր վիճակը, դպրոցների նյութատեխնիկական ու կադրային դժվարությունները, լայնորեն անդրադառնում են նաև Ջավախքում հայ ժողովրդի պատմության դասավանդման հարցին: «Զայրացուցիչն այն է, որ մինչ օրս չվճռվեց հայկական դպրոցներում հայ ժողովրդի պատմության դասավանդման գործը: Կարծում ենք, որ Վրաստանի լուսավորության նախարարությունն այդ հարցում կշարունակի իր համառությունը: Դրա համար անհրաժեշտ ենք համարում ժողկրթբաժնի հետ համատեղ հրավիրել բոլոր դպրոցների

փանվել են Հայաստանի հեռուստահաղորդումները: Նշվում է, որ «Ջավախք» կազմակերպության նախաձեռնությամբ Երևանից 3 մլն ռուբլով ձեռք են բերվել անհրաժեշտ որոշ սարքավորումներ, ստեղծվել նաև հիմնադրամ, քանի որ հեռուստահաղորդումների վերականգնման համար պահանջվել են լրացուցիչ միջոցներ:

[20] «Ջավախք», № 1, սեպտեմբեր, 1993, 4:

տնօրեններին և պատմության ուսուցիչներին և պարտադրել, որ նրանք կատարեն 1989 թ. շրջխորհրդի նստաշրջանի ընդունած որոշումը, այսինքն՝ շրջանի բոլոր հայկական դպրոցներում պարտադիր կարգով դասավանդել հայ ժողովրդի պատմությունն՝ այն մտցնելով կայուն դասացուցակի մեջ, որպես պարտադիր ու հիմնական առարկա: Ուստարվա ընթացքում հետամուտ լինել, թե արդյոք դպրոցներում այդ օրինական պահանջը կատարվում է, թե ոչ»[21],– նշված է նամակում:

Ամսաթերթի նույն համարում Ջավախքի դպրոցների ու մանկավարժների առջև ծառացած սոցիալ-տնտեսական ծանրագույն խնդիրներին է անդրադարձել նաև բարերար, գրող, մանկավարժ Օքրո Օքրոյանը՝ «Միթե ազգային աղետ չէ» վերտառությամբ հոդվածում[22]:

Ջավախքում գործող հասարակական կազմակերպությունների, «Ջավախք» ժողովրդական շարժման գործունեության ընդհանուր բնութագիրն է տրված Ախալքալաքի շրջանային վարչության նախագահի տեղակալ Ա. Սրմիկյանի «Պարտադրվածը դեմոկրատիա չէ» վերնագրով հոդվածում, որտեղ, մասնավորապես, առաջարկվում է Ախալքալաքի շրջանում «անցկացնել դեմոկրատական ընտրություններ՝ նպատակ ունենալով ընտրել օրենսդիր և գործադիր մարմիններ: ... Այսպիսի պայմաններում հանրապետության վերադաս մարմինների ավանդական դարձած միջամտությունը բացառվում է: Դեռ ավելին, սողանցք չի մնա կաշառքի, կուսակցական թայֆաբազության միջոցով իշխանության հասնելու կամ ուզուրպացիայի համար»[23]:

Իրավաբան Ա. Հովսեփյանի ««Ջավախք» ԺՇ-ի հերթական նիստը» վերտառությամբ հաղորդմամբ ներկայացվում է «Ջավախք» ժողովրդական շարժման խորհրդի հերթական նիստում քննարկված հարցերը, որոնց միջոցով պատկերացում ենք կազմում 1990-ական թվականների կեսերին Ջավախահայության առջև ծառացած խնդիրների ու երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի մասին: «Մասնավորապես բուռն կրքեր բորբոքվեցին երկու հանրապետությունների սահմանում (Հայաստանի և Վրաստանի– Վ. Ս.) տեղակայված ավազակաբարո մաքսատների վերացման, մեր դպրոցներում հայ ժողպատմությունը, աշխարհագրությունը ծրագրային առարկաներ դարձնելու, Ախալքալաքի նկարչական դպրոցին համապատասխան շենք տրամադրելու, շրջանի մանկավարժների սոցիալական վիճակը բարելավելու և այլ պրոբլեմային հարցերի մասին ընդունված որոշումները հաստատելու ընթացքում»,– նշում է հոդվածագիրը: Նիստում քննության է արժանացել նաև Սամցխե-Ջավախքի նահանգ ստեղծելու և այնտեղ Վրաստանի ղեկավարի հատուկ լիազոր-ներկայացուցիչ նշանակելու մասին էդ. Շեւարդնաձեի 1994 թ. հուլիսի 31-ի թիվ 237 հրամանագիրը[24], որոշվել է դրա դեմ իրականացնել քաղաքացիական անհնազանդություն[25]:

---

[21] *«Ջավախք», № 1, օգոստոս, 1994, 1:*

[22] *«Ջավախք», № 1, օգոստոս, 1994, 3:*

[23] *«Ջավախք», № 1, օգոստոս, 1994, 2:*

[24] *Հրամանագրի և դրան առնչվող քննարկումների մասին տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2006, 170–178:*

[25] *«Ջավախք», № 1, օգոստոս, 1994, 1: Նորաստեղծ Սամցխե-Ջավախքի նահանգի մեջ էին ներառվում հարավային՝ Ադիգենի, Ախալցխայի, Բորժոմի, Ասպինձայի,*

Վերը նշված խնդիրն է շոշափվում նաև ամսաթերթում զետեղված «Կրքեր բորբոքվեցին, և դա անցողիկ չէ» խորագրով հոդվածում, որտեղ թղթակիցը, ներկայացնելով Ախալքալաքի շրջանի ակտիվի ժողովում քննարկված օրակարգային հարցերը և հաղորդելով, որ այնտեղ ներկայացվել է նաև թիվ 237 հրամանագիրը, սուր քննադատության է արժանացնում Էդ. Շևարդնաձեի այդ քայլը: «Սահմանադրական ու բարոյադեմոկրատական և ոչ մի հիմք չունեցող այդ փաստաթուղթը, բացի կրքեր բորբոքելուց, ժողովրդի մեջ երկպառակության սերմանելուց ոչինչ չի տա: Այդ փաստաթուղթը հանդիսանում է տխրահռչակ 21 կիլոմետրանոց սահմանային տարածաշերտ ստեղծելու[26], Վրաստանում հայերին դեպորտացիայի ենթարկելու սնանկ քաղաքականության տրամաբանական շարունակությունը»[27]:

«Ջավախք»-ի 1994 թ. օգոստոսյան համարը լայնորեն անդրադարձել է նաև Ջավախահայության հասարակական-մշակութային կյանքին: Մասնավորապես, հոդվածներ ու հրապարակումներ են տպագրվել Սաթխա գյուղի եկեղեցու վերակառուցման («Նորոգվում է եկեղեցին», հեղինակ՝ Ջավախահայ անվանի մտավորական, բանահավաք, կենսագիր Ալբերտ Իսոյան), առաջին անգամ Ախալքալաքում բացված Ջավախահայ արվեստի գործիչների ստեղծագործությունների ցուցահանդեսի («Ջավախքը Ջավախքցիների կտավներում», հեղինակ՝ Մ. Ադամյան), Ս. Կապուտիկյանի 75-ամյակի առիթով Նինոծմինդայում գրողի ներկայությամբ կայացած մեծարման երեկոյի [«Մեծարման երեկո», հեղինակ՝ Ջավախահայ անվանի մտավորական, Վահան Տերյանի տուն-թանգարանի (1957 թ.), Ախալքալաքի գավառագիտական թանգարանի (1958 թ.), «Պոեզիայի տերյանական օրեր» ավանդական հանդիսության (1967 թ.), Բոգդանովկայի շրջանային «Արշալույս» թերթի (1966 թ.), Նինոծմինդայի Մարտական փառքի թանգարանի (1970 թ., մայիսի 9), Վիկտոր Հովսեփյանի տուն թանգարանի (1997 թ.), «Փարվանա» կազմակերպության (1989 թ.) և համանուն թերթի (1991 թ.), «Գանձա» թերթի (1991 թ.) և այլնի հիմնադիր կամ համահիմնադիր Մոլիկ Սեդրակյան], ազատամարտիկ Մաքսիմ Ռախայանի («Մեր Մաքսիմը»), Գանձայում 27-րդ անգամ նշված պոեզիայի տերյանական օրվա («Պոեզիայի տոնը», հեղինակ՝ բանաստեղծ Վարդ Ղազարյան), Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանային մշակույթի տների կողմից ստեղծված համույթի՝ Հյուսիսային Կովկասում տված շուրջ 4 տասնյակ համերգների («Անմոռաց պահեր», հեղինակ՝ Մինաս Ղազարյան) մասին:

Հիշատակման է արժանի նաև Շմավոն քահանա Տեր-Սողոյանի «Նորօրյա ազգադավ «առաքյալները»» վերնագրով համարձակ հոդվածը, որտեղ հոգևորականը դատապարտում է Ջավախքում լայն տարածում գտնող աղանդավորների գործունեությունը:

Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջանները, դուրս էր թողնվում Ջավախքի օրգանական մասը կազմող նախկին հայաբնակ-հունաբնակ, իսկ հույների հեռանալու պայմաններում հիմնականում հայաբնակ շրջանի վերածվող Ծալկայի շրջանը:

[26] Հայտնի «սահմանային գոտու» կազմավորման մասին Վրաստանի իշխանությունները մի շարք որոշումներ են ընդունել 1992 թ. առաջին կեսին: Ջավախքի հասարակական կազմակերպությունների և ազգաբնակչության սուր դիմադրությանն արժանացած այդ որոշումների մանրակրկիտ քննությունը տե՛ս Սարգսյան. 2006, 137–145:

[27] «Ջավախք», № 1, օգոստոս, 1994, 2:

«Զավախք»-ը վերստին «Զավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթ

Ինչպես նշվեց, «Զավախք»-ի հաջորդ համարը լույս տեսավ 1994 թ. սեպտեմբերին՝ վերստին իբրև Ախալքալաքի շրջանի «Զավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթ: Ամսաթերթի հաղորդմամբ՝ 1994 թ. օգոստոսի 24-ին կայացած «Զավախք» ժողովրդական շարժման նախագահության հերթական նիստում որոշվել է, որ «Զավախք» պաշտոնաթերթն այսուհետև հանդես է գալու իբրև «Զավախք» ժողովրդական շարժման օրգան[28]: Չնայած թերթը նշվել է որպես «Զավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթի 2-րդ համար, բայց փակագծերում գրվել է 4, հաշվի առնելով նաև «Զավախք»-ի՝ իբրև Ախալքալաքի շրջանի «Արշալույս» կազմակերպության պաշտոնաթերթ հրատարակված նախորդ երկու համարները:

«Զավախք»-ի 2-րդ (4-րդ) համարը (սեպտեմբեր, 1994 թ.), ինչպես նշեցինք, լույս է տեսել 6 էջ ծավալով՝ անդրադառնալով ինչպես նահանգի սոցիալ-տնտեսական խնդիրներին, այնպես էլ ազգային ու հասարակական-քաղաքական կյանքին, Զավախքի պատմական դեմքերին ու գաղափարական հարցերին: Ամսաթերթի հիմնական քննարկման թեմաներից մեկը, ինչպես նախորդ համարում, շարունակում էր մնալ Էդ. Շևարդնաձեի թիվ 237 հրամանագիրը: Ըստ հաղորդման՝ հրամանագիրը բուռն վերլուծության է արժանացել «Զավախք» ժողովրդական շարժման նախագահության հերթական նիստում, որտեղ հրավիրված Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ֆերդինանդ Ալեքսանյանը տեղեկություններ է հաղորդել իր և Ախալքալաքի շրջանային վարչության ղեկավար Ստեփան Ստեփանյանի՝ Վրաստանի պետության ղեկավարի հետ ունեցած հանդիպման մասին[29]: Թերթում բերված է նաև Նինոծմինդայի շրջանի «Օղա» բարեգործական ընկերության խորհրդի ընդլայնված նիստում նահանգի ստեղծման թիվ 237 հրամանագրի քննարկումն ու դրա հենքի վրա Էդ. Շևարդնաձեին ուղղված դիմում-պահանջագիրը: Հրապարակված է նաև Նինոծմինդայի շրջանային վարչությունում տեղի ունեցած հավաքի մասին հաղորդագրությունը, որտեղ վարչության նախագահ Ռաֆայել Արզումանյանը շրջանի ակտիվին է ներկայացրել Ախալցխայում նորաստեղծ նահանգի 6 շրջանների ներկայացուցիչների և Էդ. Շևարդնաձեի հետ հանդիպման արդյունքներն ու խնդրո առարկա հրամանագիրը: Բոլոր հանդիպումներում և քննարկումներում նորաստեղծ նահանգի ու Վրաստանի ղեկավարի լիազոր-ներկայացուցչության ինստիտուտի ստեղծումը համարվել է անընդունելի թե՛ ժողովրդագրական պատկերի անհամաչափության, թե՛ տեղական ինքնակառավարման, թե՛ տնտեսական և այլ առումներով[30]:

Իբրև ջավախահայությանը հուզող առաջնային հիմնահարց՝ թերթը երեք ծավալուն հոդվածներով ահազանգում է Զավախքի դպրոցներում տիրող տնտեսական ծանր իրադրությունը, Վրաստանի ազգային արժույթի՝ կուպոնի ներդրման և արժեզրկման պատճառով ուսուցիչների սոցիալական տագնապալի

---

[28] *«Զավախք», № 2 (4), սեպտեմբեր, 1994, 1: Ամսաթերթի տպագրական ծախսերը հոգացել է բարերար, Ախալքալաքի շրջանի Տուրցխ գյուղի բնակիչ Օ. Օքրոյանը:*

[29] *«Զավախք», № 2 (4), սեպտեմբեր, 1994, 1:*

[30] *«Զավախք», № 2 (4), սեպտեմբեր, 1994, 5:*

վիճակն ու ապրուստի միջոց չունենալու բերումով դպրոցը լքելու միտումների մասին[31]:

«Խմբագրությունը հարկադրված է այժմվանից տագնապ հնչեցնել, քանզի կրթօջախներին այսօր սպառնում է մի ահավոր աղետ, վտանգի տակ է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության սրբազան գործը: Այլևս չխոսելով այն մասին, որ անցած ուսումնական տարում վառելիքի պատճառով ամենուր դասերն անցնում էին կիսատ-պռատ, իմիջայլոց, և երեխաները չստացան անհրաժեշտ գիտելիքներ, ներկայումս հարյուրավոր որակյալ մանկավարժներ լքել են սիրած գործը, իրենց գոյությունը պահպանելու համար անցել են այլ զբաղմունքի կամ էլ մեկնել արտագնա աշխատանքի: Այդպիսով դպրոցների մեծամասնությունում մնացել են կենսաթոշակառուները, ընտանեկան հոգսերով ծանրաբեռնված կանայք, բարձրորակ մասնագետներին փոխարինում են միջնակարգ կրթությամբ երիտասարդներ, որոնք նույն դպրոցներում չեն փայլել իրենց գիտելիքներով»[32],– ահազանգում է «Ջավախք»-ի խմբագրությունը:

Ինչպես նշեցինք՝ ամսաթերթում մեծ տեղ էր հատկացված նաև պատմությանն ու գաղափարական հարցերին, ինչը բնորոշ է ազգային զարթոնքի արգասիք հանդիսացող կազմակերպությունների մամուլի օրգաններին: Ըստ այդմ՝ «Ջավախքի երախտավորները» խորագրի տակ ներկայացվում է Ախալքալաքի նշանավոր գերդաստաններից՝ Օհանջանյանների տոհմի պատմությունն ու վերջինիս անվանի ներկայացուցիչ, Հայաստանի առաջին Հանրապետության 3-րդ վարչապետ Համո Օհանջանյանի փոթորկուն կյանքի ուղին: Ամսաթերթում երկու ամբողջական էջով ներկայացվում է ջավախահայ անվանի գրող, մտավորական Նազարեթ Կիրակոսյանի աշխատասիրությամբ վերահրատարակության պատրաստվող «Ղունկիանոսի ընծան»[33] գրքի նախաբանը («Սրտի խոսք, հոգու պարտք»): Արժեքավոր է նաև թղթակից Գևորգ Այվազյանի՝ ջավախահայ անվանի գործիչ Պողոս Աբելյանի՝ Խորհրդային Հայաստանի արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանին 1921 թ. ներկայացրած զեկուցագրի[34] մասին ծավալուն հոդվածը, որը քննել և արժևորել է ժամանակի պատմական իրադարձությունների լայն համապատկերի վրա:

Հետխորհրդային շրջանի ջավախահայ հասարակական մտքի մեջ իր բնույթով նոր խոսք էր գաղափարական հարցերին նվիրված Արտաշես Տեր-Ղևոնդյանի՝ «Գրքերի աշխարհում» խորագրով լույս տեսած «Ճշմարտությունը վեր է ամեն ինչից» գրախոսական-հոդվածը՝ նվիրված Էդուարդ Հովհաննիսյանի «Պայքարի դարաշրջան» մենագրություն-երկհատորյակին[35] և ՀՅ Դաշնակցություն կուսակցության անցած մեկդարյա ուղուն:

«Ջավախք»-ի 1994 թ. հոկտեմբերի համարում տեղ է գտել Հայոց ցեղասպանության 80-ամյակի միջոցառումների ընդարձակ պլանը, որի 3-րդ կետով

---

[31] Խմբագրական՝ «Նոր ուսումնական տարվա առթիվ հարկադրված ենք տագնապ հնչեցնել», Ա. Սրմիկյան՝ «Ժամանակի հրամայականն է՝ օգնել դպրոցին», «Ազգը դպրոցով է լուսավոր ու գորեղ» (խմբագրության «Կլոր սեղանի» շուրջը):

[32] «Ջավախք», № 2 (4), սեպտեմբեր, 1994, 1:

[33] Ն. Կիրակոսյանի աշխատասիրությամբ վերահրատարակված մեծանուն բանաստեղծ, պոետ, աշուղ Ղունկիանոս երգիչ Կարնեցու (1781, Կարին – 1841, Ախալքալաք, գյուղ Վարևան) բանաստեղծությունների գիրքը լույս է տեսել Երևանում 1995 թ. (տե՛ս Ղ ու ն կ ի ա ն ո ս երգիչ Կ ա ր ն ե ց ի. 1995):

[34] Ախալքալաքի հիմնահարցի մասին Պողոս Աբելյանի զեկուցագիրն ամբողջությամբ տե՛ս Մ ե լ ք ո ն յ ա ն. 2003, 467–493:

[35] Оганесян. 1991.

նախատեսվում էր «Վրաստանի Հանրապետության ղեկավարի, պառլամենտի և կառավարության ուշադրությունը հրավիրել Հայոց ցեղասպանության 80-ամյակի օրը հիշատակելու վրա»[36]:

Ա. Սրմիկյանի՝ «Ջավախքը՝ սարդոստայնում» ծավալուն հոդվածում Վրաստանում առկա քաոսային իրավիճակի (ազգայնական շարժումներ, փլուզված տնտեսություն, ազգամիջյան լարված հարաբերություններ և քաղաքական բախումներ, հանցավոր ու կլանային խմբավորումների բարգավաճում և այլն) համապատկերին ներկայացվում է հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակը Ջավախքում, քննադատում երկրի իշխանություններին, քաղաքական ուժերին, կուսակցություններին և շրջանային կառավարիչներին ստեղծված քաոսի ու խմբակային շահեր սպասարկող համակարգի ստեղծման համար:

Հասարակական կյանքին առնչվող խնդիր էր ներկայացնում նաև «Ջավախքցիների բողոքը տեղ հասավ» վերտառությամբ հրապարակումը, որտեղ անդրադարձ էր կատարվում Հայաստանի Հանրապետություն–Վրաստան սահմանի Նինոծմինդա-Բավրա հատվածում երկու երկրների իշխանությունների կողմից տեղադրված մաքսային հսկողության անցակետերի ապօրինի գործողություններին, որոնք, ըստ թերթի, հաճախ վերածվում էին թալանի: Ներկայացվում է նաև Ախալքալաքի շրջանային վարչությունում այդ հարցի վերաբերյալ տեղի ունեցած քննարկումը, որին Ախալքալաքի ղեկավարության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մասնակցել էին նաև ՀՀ մաքսային վարչության պետ Երջանիկ Աբգարյանը, Աշոցքի մաքսատան պետի պաշտոնակատար Շալիկո Զորոզլյանը և այլ պաշտոնյաներ Հայաստանից[37]:

---

[36] Պլանում ներառված՝ Վրաստանի իշխանություններին ուղղված դիմումի մեջ նշվում էր, որ հարկ է Վրաստանի իշխանությունները խնդրեն Թուրքիայի կառավարությանը, որ ցուցաբերի քաղաքակիրթ մոտեցում և ընդունի Հայոց ցեղասպանության փաստը [«Ջավախք», № 3 (5), հոկտեմբեր, 1994, 1]: Ինչպես տեսնում ենք, «Ջավախք» ժողովրդական շարժման ղեկավարությունը, խանդավառվելով ազգային հարցերի բարձրաձայնման հնարավորություններով, երբեմն բարձրացնում էր չափազանց անիրատեսական հարցեր. Վրաստանի իշխանությունները, որոնք իրենք որևէ քայլ չէին արել (և մինչ օրս չեն արել) Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ուղղությամբ, բնականաբար, հազիվ թե դա պահանջեին Թուրքիայից:

[37] Հատուկ նշենք, որ ամսաթերթի այդ համարում տեղ են գտել նաև Ջավախքի սոցիալ-տնտեսական [Գ. Այվազյան՝ «Մենք ենք, մեր լեռնաշխարհը» (Ջավախքին սպառնացող արտագաղթի, արտագնա աշխատանքի մեկնելու մասին), Մոլիկ Սեդրակյան «Վա՜յ տեր, վա՜յ անտեր» (Ջավախքի կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների անասնագլխաքանակի յուրացման, անասնաշենքերի թալանի ու ավերման մասին)], հոգևոր-մշակութային [Օքրո Օքրոյան՝ «Հավատացյալներ, համախմբվենք եկեղեցու շուրջը», Հովհաննես Բեգոյան՝ «Թեհրանեն... Հեշտիա» (Պարսկաստանի հայ կաթոլիկության պատվիրակության՝ Ջավախք այցի և Հեշտիա կաթոլիկ գյուղում տրված պատարագի և հաջորդած գեղարվեստական միջոցառման մասին), Ա. Խաչատրյան, Գ. Խոդիկյան՝ «Քսան համերգ» (Ախալքալաքի մշակույթի շրջանային տան կոլեկտիվի՝ Հյուսիսային Կովկասում ունեցած շուրջ երկու տասնյակ համերգների մասին), «Երիտասարդ բարերարը» (Թորիա գյուղի եկեղեցու նորոգման մասին), Մոլիկ Սեդրակյան՝ «Հպարտացիր քո որդիներով, Ջավախք. Ակադեմիկոսը»

Ուշադրության է արժանի «Գրիգոլ Լորթքիփանիձեի նամակը Ստալինին (թե ովքեր են հայերի իսկական բարեկամները)» վերտառությամբ հրապարակումը, որտեղ ներկայացվում է վրաց անվանի քաղաքական գործչի 1936 թ. գրած նամակի՝ հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական հարաբերություններին վերաբերող հատվածները: Նամակը հասցեագրված է եղել ԽՍՀՄ սահմանադրական հանձնաժողովի նախագահ Ի. Ստալինին, անդամներ Վ. Մոլոտովին, Մ. Լիտվինովին և Կ. Ռադեկին:

«Ջավախքի» 1994 թ. վերջին (նոյեմբեր) համարում շարունակվում են ջավախահայության առջև ծառացած սոցիալ-տնտեսական, կրթամշակութային խնդիրների քննարկումները: Հասարակական-քաղաքական բնույթի որոշ հարցերին գումարվում են նորերը: Ամսաթերթը հրապարակել է Հայաստանում գործող «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության[38] կոչն ուղղված Ջավախքի բնակիչներին, ուսուցիչներին, դպրոցների տնօրեններին, շրջանի ղեկավարներին: Նկարագրելով Ջավախքի կրթական ոլորտում ստեղծված անմխիթար վիճակը, որը պայմանավորված էր Վրաստանի սոցիալ-տնտեսական ծանրագույն իրավիճակով, ինչպես նաև ներկայացնելով դպրոցներն ամեն գնով պահելու, ուսուցիչների արտագաղթը և կրթական կյանքին հասցված անդառնալի վնասները նվազեցնելու կարևորությունը՝ հայրենակցական միությունն անում է գործնական մի շարք առաջարկներ: Մասնավորապես, (1994 թ. վերջին)

(Ջավախքի Խոջաբեկ գյուղում ծնված, ԽՍՀՄ, այնուհետև ՌԴ ռազմական պաշտպանունակության, զենքի կատարելագործման և սպառազինության խորագիտակ, Ջերժինսկու անվան ռազմական ակադեմիայի պետի՝ ուսումնական և գիտական աշխատանքների գծով տեղակալ Վլադիմիր Զորանյանի անցած ուղում մասին)] կյանքը ներկայացնող և այլ հրապարակումներ, լուրեր և այլն: «Ջավախք» պաշտոնաթերթի վերածննդի (վերահրատարակության) առիթով թերթին շնորհավորել են հայտնի հաշվապահ Վլադիմիր Մնիչյանը (Ախալցխայից) և Վ. Ղազարյանը (Ջավախքի Գանձա գյուղի ծնունդ, երևանաբնակ բանաստեղծ):

[38] «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միությունը հիմնադրվել է 1990 թ. հունվարին Երևանում ԽՍՀՄ Սահմանադրության 51-րդ, ՀԽՍՀ Սահմանադրության 49-րդ հոդվածների և իր Կանոնադրության հիման վրա: Վերջինիս նպատակն է միավորել հայ, վրացի և մյուս ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, Ջավախքի և մերձակա վայրերի հայաստանաբնակ հայության ազգապահպանությանը, մշակութակենցաղային և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանն ուղղված հայաստանաբնակ հայրենակիցների ջանքերը: Ժամանակի ընթացքում կազմակերպությունն իր մասնաճյուղերը բացեց նաև ՀՀ մարզերում [տե՛ս Կանոնադրություն «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության, ընդունված «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության համայնքային ներկայացուցիչների հիմնադիր ժողովում, 20. 01. 1990 թ., ք. Երևան (Վ. Սարգսյանի անձնական արխիվ)]: Միության առաջին նախագահն էր ջավախահայ Ռուբեն Նահատակյանը (1990–1992 թթ.), երկրորդը՝ դրող, հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանը (1992–1994 թթ.): Բազմաթիվ նշանավոր ջավախահայերի համախմբած միությունը հիմնադրեց «Ասպնջակ» պաշտոնաթերթը [ընդհատումներով տպագրվել է 1991 թ. մարտի 25-ից 2010 թ. հոկտեմբեր (124 համար)]: «Ասպնջակը» 2006–2010 թթ. (99–124-րդ համարներ) տպագրվել է «Հայրենիք» անվամբ: Մ. Սահակաշվիլու իշխանության տիրահռչակ տարիներին Հայաստանից Վրաստան գրքերի, թերթերի և մշակութային առարկաների տեղափոխման արգելքների պայմաններում «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միությունն այլևս չշարունակեց «Ասպնջակ» – «Հայրենիքի» հրատարակությունը Երևանում:

մասնակի վճարովի համակարգին անցնելը դիտվել է իբրև մարտահրավերն ինչ-որ կերպ հաղթահարելու միջոց: Գործընթացն առաջարկվում էր կազմակերպել այդ նպատակով ստեղծվելիք ծնողական խորհուրդների, կոլտնտեսությունների վարչությունների, շրջանի իշխանությունների միջոցով:

Ստեղծված դժվարին պայմաններում Զավախքում մշակութային կյանքը վառ պահելու անհրաժեշտության մասին է խոսում Գանձա գյուղի մշակույթի տան տնօրեն Ժորա Իգիթյանը՝ «Հանուն մշակույթի պահպանման» խորագրի տակ զետեղելով իր մտորումները:

Ամսաթերթի 4-րդ (6-րդ) համարում ավանդաբար զետեղված է մայր կազմակերպության՝ «Զավախք» ժողովրդական շարժման խորհրդակցության մասին հաղորդում, որից տեղեկանում ենք նահանգի հասարակական-քաղաքական անցուդարձի մասին: Կազմակերպության ներկայացուցիչների և Ախալքալաքի շրջանի ղեկավարության ու առանձին ծառայությունների ղեկավարների հետ ընդլայնված հանդիպում-խորհրդակցությանը քննարկված օրախնդիր հարցերն առնչվում էին սոցիալական անապահով իրադրությանը, գյուղատնտեսական ձեռնարկությունների գործունեությանը, Է. Շևարդնաձեի թիվ 237 հրամանագրին և այլն:

Ազգային-քաղաքական նշանակության հարցերի թվում թերթն անդրադարձել է թուրք-մեսխեթցիների՝ Զավախքի շրջաններ վերադարձի ցանկության և դրանով առաջացող մի շարք խնդիրների ու մարտահրավերների [«Թուրքը նույնն է՝ անկախ տեղանունից» (հեղինակ՝ Մ. Անանունի)][39]:

Ամսաթերթի նոյեմբերյան համարը հարուստ է Զավախքի պատմության էջերը, մշակութային իրադարձություններն[40] ու նշանավոր գործիչների դիմապատկերները ներկայացնող հրապարակումներով: Այսպես, «Զավախքի երախտավորները» շարքով ներկայացվել է Հայաստանի առաջին Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունու (Իգիթխանյան) կյանքն ու գործունեությունը, իսկ Զավախքի կրթամշակութային կյանքի կազմակերպման երախտավոր, մեծանուն մտավորական Մ. Սեդրակյանի «Ճակատագրով դատապարտվածները» հոդված-ուսումնասիրությունը ներկայացնում է 1930–1950 թթ. Զավախքի Նինոծմինդայի շրջանից աքսորվածների թիվը՝ ըստ բնակավայրերի: Հեղինակի եզրահանգմամբ՝ նշված թվականներին շրջանից աքսորվել է շուրջ 1300 հոգի, վերադարձել՝ մոտավորապես 25–30 հոգի: Մնացածների ճակատագիրն անհայտ է: Նվիրյալ մտավորականը նաև ափսոսանք է հայտնում, որ անհայտ մնացած ջավախքցիների (բոգդանովկացիների) ճակատագրերի հիշատակը հավերժացնող հուշակոթող չի կանգնեցվել տասնամյակների ընթացքում. «Նոր սերունդը ոչինչ չգիտի այս ահավոր ոճիրի մասին: Չգիտի, որովհետև ոչ մի գյուղում հուշակոթող չի կանգնեցվել անմեղ զոհերի հիշատակին, թանգարաններում նյութեր չկան այդ մասին, դպրոցներում սովորաբար շրջանցում են այդ թեման»:

Ն. Տեփոյանի «Նահատակն անմահացավ» վերտառությամբ ակնարկն Ախալքալաքի շրջանի Բուղաշեն գյուղի զավակ, Արցախյան գոյապայքարում

---

[39] *«Զավախք», № 4 (6), նոյեմբեր, 1994, 1:*

[40] *«Մասնակցեցին փառատոնին» վերտառությամբ անդրադարձում ներկայացված է Ախալքալաքի մշակույթի շրջանային տան «Հայկ» մանկական պարի համույթի (պարուսույց և գեղարվեստական ղեկավար՝ Ս. Խոդիկյան) և ժողգործիքների անսամբլի (ղեկավար՝ Ա. Էլբակյան) մասնակցությունը ՀՀ-ում անցկացված ժողովրդական պարի միջազգային փառատոնին, տված համերգներն ու ունեցած հաջողությունները:*

մարտի 6-ին նահատակված հետախույզ Միքայել Ավագյանի[41] կիսանդրին հայրենի գյուղում տեղադրելու, ազատամարտիկի անցած ուղին արժևորելու մասին է[42]: Հասարակական-քաղաքական գործիչ, խմբագիր և հրատարակիչ Մելս Թորոսյանը, «Իմացյալ մահն անմահություն է» հոդվածում շարունակելով ազատամարտի թեման, ներկայացնում է մեկ այլ ազատամարտիկի՝ Պետրոս Աբաջյանի[43] մարտական ուղին և Ախալքալաքի Վարևան գյուղում 1993 թ. վեր խոյացած հուշարձանախմբի խորհուրդը. «Վարևան գյուղի վրա հսկող բլուրի արևակող լանջին է կառուցվել այդ հուշահամալիրը, կենտրոնում հայ ժողովրդի լինելիությունը հավաստող միջնադարյան հզոր աշտարակն է կամարակապ խոյակներով՝ վերևում հայ խաչը՝ ազգասիրության, միասնության ու հավատի սիմվոլը: Իսկ ներքևի հաղթակամարի տակից կարծես դեպի իր ժողովրդի

---

[41] *Ազատամարտիկի կենսագրությունը տե՛ս* Ղ ա զ ա ր յ ա ն. *2013, 45–46:*

[42] *2019 թ. հունվարի 20-ին Ախալքալաքի շրջանի Բուղաշեն գյուղում վերաբացվեց Մ. Ավագյանի կիսանդրին: 1994 թ. տեղադրված հին հուշարձանը վնասվել էր, և ազատամարտիկի ազգականների բարեգործության միջոցով տեղադրվեց նոր կիսանդրին, որի բացումը տեղի ունեցավ երկրի պաշտոնատար անձանց ներկայությամբ: 2019 թ. փետրվարի 8-ին Վրաստանի խորհրդարանի շենքի դիմաց երկրի ազգությամբ ադրբեջանցի մի խումբ քաղաքացիներ բողոքի ցույց էին անցկացրել՝ պահանջելով ապամոնտաժել Մ. Ավագյանի վերաբացված կիսանդրին: Որպեսզի ավելի շիկացվեր մթնոլորտը, և վրաց հասարակության շրջանում ատելության մթնոլորտ ձևավորվեր Մ. Ավագյանի հանդեպ՝ ադրբեջանական շրջանակները, նրանց հետ նաև վրաց որոշ ընդդիմադիր-թուրքամետ շրջանակներ կեղծ տեղեկություններ տարածեցին առ այն, թե, իբր, նա գործել է ոչ միայն Արցախում և «ահաբեկել» ադրբեջանցիներին, այլև եղել է աբխազական պատերազմի մասնակից և պայքարել Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ: Այս կեղծիքը շատ արագ բացահայտվեց. ազատամարտիկի կինը՝ Մանուշակ Ավագյանը, հրապարակելով ամուսնու անձնական փաստաթղթերը, հայտարարեց, որ նա վրաց-աբխազական պատերազմին պարզապես չէր կարող մասնակցել, քանի որ այդ ժամանակ գտնվում էր Հայաստանում [ըստ Մ. Ավագյանի՝ 1990 թ. վերջին իրենք ընտանիքով տեղափոխվել են ՌԴ, իսկ 1991 թ. Մ. Ավագյանն արդեն բնակվել է Հայաստանում և գրանցվել Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղում: Դրա մասին է վկայում անձնագրում կատարված գրանցումը: 1992 թ. ՀՀ-ում ծնվել է նրանց դուստրը: Մ. Ավագյանն այդ թվականներին աշխատել է «Հայգազարդ» ընկերության Գորիսի մասնաճյուղում, իսկ արդեն 1993 թ. նա ընտանիքով տեղափոխվել է Արցախ և կամավոր մասնակցել Արցախյան ազատամարտին՝ որպես հետախուզական ջոկատի հրամանատար (տե՛ս «Ազատամարտիկ Միքայել Ավագյանը չի մասնակցել վրաց-աբխազական բախումներին. մերկացվել է հերթական ադրբեջանական սուտը».–* https://armenpress.am/hy/article/9638 67)*: Լարվածությունը թուլացնելուն, Բաքվի և Վրաստանի ինչպես ադրբեջանական, այնպես էլ ընդդիմադիր-ադրբեջանամետ շրջանակների սադրանքները կանխելուն էր միտված նաև Ջավախքում գործող Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի ծավալուն հայտարարությունը: Խորհուրդը, ներկայացնելով իրերի իրական պատկերը, խստորեն դատապարտեց Վրաստանի ներքին գործերին միջամտելու դրսևորումները, քաղաքական նպատակներով երկիրը և տարածաշրջանն ապակայունացնելու փորձերը՝ իր զորակցությունը հայտնելով Վրաստանի իշխանություններին (տե՛ս «Խորհրդի արձագանքը Ավագյանի կիսանդրու շուրջ ծավալված իրարանցմանը».* – https://jnews.ge/am/28375/#.XGF8jjMzbIU)*:*

[43] *Ազատամարտիկի կենսագրությունը տե՛ս* Ղ ա զ ա ր յ ա ն. *2013, 30–32:*

ապագան է շարժվում արցախյան հերոս Պետրոս Աբաջյանը՝ զենքը ձեռքին, արդար գայրույթն ու ցասումը դեմքին դրոշմված: Հուշահամալիրի աջից լանջնիվեր բազալտե պատվանդաններին տեղակայված են հայ ազատագրական պայքարի ռահվիրաների՝ Անդրանիկի, Սերոբի, Գևորգ Չաուշի ու Նժդեհի կիսանդրիները, որոնց ջերմ հայացքի տակ հանդչում է ազգի նահատակ Պետրոս Աբաջյանի աճյունը: ... Այս սքանչելի սրբավայրը կոլեկտիվ մտքի ու աշխատանքի արգասիք է: Այն հեղինակել են հայր և որդի Վենետիկ և Պետրոս Բաղնիքյանները, իսկ քանդակներն արարողը Յուրա Մինասյանն է»[44]:

Արցախյան գոյապայքարի թեման ամսաթերթում ամփոփվում է ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի ինժեներական ծառայության պետի տեղակալ, «Արցախ ագրոսպասարկում» արտադրական միավորման գլխավոր տնօրեն Ռուդիկ Ազարյանի հետ հարցազրույցով: «Վրացդյուղտեխնիկայի» Ախալքալաքի ձեռնարկությունից Արցախի գյուղմեքենաների համար քսանյութ և պահեստամասեր ձեռք բերելու նպատակով այդ օրերին Զավախք այցելած զինվորականը պատմում է 1994 թ. մայիսյան հաղթական զինադադարից հետո Արցախի տնտեսության և կրթամշակութային կյանքի վերաշինության և ձեռքբերումների մասին («Արցախը շտկում է մեջքը»):

«Զավախք»-ն առանձնակի հպարտությամբ է ազդարարում երիտասարդ պատմաբան, լեռնաշխարհի զավակ Աշոտ Մելքոնյանի (ակադեմիկոս Ա. Մելքոնյանը 2002 թվականից ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենն է) «Էրզրում» աշխատության[45] լույսընծայումն ու «Էրզրում. արժեքավոր գիրք» խորագրով ներկայացնում գրքի գրախոսականը՝ փաստելով, որ «... խորհրդային իշխանության տարիներին այդպես էլ չի հրատարակվել Զավախքի պատմական անցյալին, քսաներորդ դարում այստեղ կատարված էթնոժողովրդագրական գործընթացներին և տեղաշարժերին նվիրված ծավալուն գիրք[46]: Պատմաբանները լռությամբ էին անցնում նաև այնպիսի կարևորագույն իրադարձության կողքով, ինչպիսին էր, ասենք, 1829–1830 թվականների Կարսո մեծ գաղթը, որի արդյունքում Զավախքում, Ախալցխայի, Ասպինձայի, Ծալկայի շրջանների տերիտորիաներում ստեղծվել են հարյուրավոր հայկական նոր բնակավայրեր: Հասկանալի է, որ այդ բնակավայրերում ապրողները միշտ էլ հետաքրքրվել ու այսօր էլ հետաքրքրվում են իրենց նախնիների բնաշխարհով, գաղթի պատմության մանրամասներով, սոցիալ-քաղաքական այն նախադրյալներով, որոնք պատճառ դարձան զանգվածային տեղափոխմանը: Այս և այլ հարցերի սպառիչ պատասխանները ընթերցողը կարող է ստանալ երիտասարդ պատմաբան, մեր հայրենակից Աշոտ Մելքոնյանի «ԷՐԶՐՈՒՄ» գրքից»[47]:

Եզրակացություն

ԽՍՀՄ փլուզման և Վրաստանի անկախության առաջին տարիներին Զավախքում տեղի ունեցած գործընթացների ուսումնասիրման, խնդիրները համակողմանի ու անաչառ լույսի ներքո քննելու գործում մեծ է հատկապես տեղական մամուլի դերը: 1990 թ. հիմնադրված և մինչև 1998 թ. անկանոն

---

[44] Տե՛ս «Զավախք», № 4 (6), նոյեմբեր, 1994, 3:

[45] Մ ե լ ք ո ն յ ա ն. 1994:

[46] Այդ բացը լրացվեց հետագա տարիներին, երբ լույս տեսավ Ա. Մելքոնյանի կապիտալ աշխատությունը (տե՛ս Մ ե լ ք ո ն յ ա ն. 2003):

[47] «Զավախք», № 4 (6), նոյեմբեր, 1994, 3:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

հրատարակված «Ջավախք» ամսաթերթը, իբրև տվյալ ժամանակահատվածում երկրամասում մեծ դերակատարում ունեցած «Ջավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթ, կարևոր, իսկ հաճախ՝ աղբյուրագիտական նշանակություն ունեցող նյութեր է պարունակում Ջավախահայության՝ հասարակական-քաղաքական, ազգային, կրթամշակութային, հոգևոր կյանքի, Վրաստանի իշխանությունների ընդունած օրենքների ու որոշումների, Արցախին ցուցաբերած օժանդակության մասին: Իրեն հայտարարելով 1913–1916 թթ. Ախալքալաքում հրատարակված «Ջավախք»-ի ավանդույթների շարունակող՝ 1990 թ. հիմնադրված «Ջավախք»-ը նոր խոսք ու երևույթ էր Ջավախքում, Ջավախահայության առջև ծառացած մարտահրավերների վերհանման ու քննարկման հարթակ: Ամսաթերթում տպագրված նյութերի համակողմանի ուսումնասիրումը նոր լույս է սփռում Ջավախքի հետխորհրդային շրջանի պատմության մի շարք անցքերի ուսումնասիրման վրա:

Վահե Սարգսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ Ջավախահայության հիմնախնդիրներ, Հայաստան–Վրաստան հարաբերություններում Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 35 հոդվածի:
ORCID: 0009-0003-8437-5845. vsargsyan83@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազատամարտիկ Միքայել Ավագյանը չի մասնակցել վրաց-աբխազական բախումներին. մերկացվել է հերթական ադրբեջանական սուտը, 11.02.2019.– https://armenpress.am/hy/article/963867 (դիտվել է 15. III. 2025 թ.):

Արձանագրություն № 3, 19.05.1990, ք. Ախալքալաք (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Բանաձև «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության կոնֆերանսի, անթվակիր (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Խորհրդի արձագանքը Ավագյանի կիսանդրու շուրջ ծավալված իրարանցմանը, 11.02.2019.– https://jnews.ge/am/28375/#.XGF8jjMzbIU (դիտվել է 15. III. 2025 թ.):

Կանոնադրություն «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերության», ընդունված «Վերակառուցում ժողովրդական շարժում» ընկերության կողմից 01 հունիսի, 1989 թ., գրանցված Ախալքալաքի շրջխորհրդի գործկոմի առ 08. 09. 1989 թ. № 118 որոշմամբ (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Կանոնադրություն «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության, ընդունված «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության համայնքային ներկայացուցիչների հիմնադիր ժողովում, 20. 01. 1990 թ., ք. Երևան (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Ղազարյան Վ. 2013, Ջավախքի արծիվները Արցախի լեռներում, Երևան, «Հայաստան» հրատ., 184 էջ:

Ղունկիանոս երգիչ Կարնեցի. 1995, Ղունկիանոսի ընծան, Երևան, «Գիր գրոց», 110 էջ:

Մաղալյան Վ. 1997, Զավախքի անդրանիկ պարբերականը. – «Հանդես Երևանի համալսարանի, գիտահանրամատչելի լրատու», № 1 (87), էջ 81–85:

«Մարտիկ» (Երևան), 2001, սեպտեմբեր, թիվ 37:

Մելքոնյան Ա. 1994, Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը ԺԹ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, «Հայաստան», ՀՀ ԳԱԱ հրատարակչություններ, 180 էջ:

Մելքոնյան Ա. 2003, Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ-97» հրատ., 544 էջ:

«Զավախք», № 1, դեկտեմբեր, 1990, № 1, սեպտեմբեր, 1993, № 1, օգոստոս, 1994, № 2 (4), սեպտեմբեր, 1994, № 3 (5), հոկտեմբեր, 1994, № 4 (6), նոյեմբեր, 1994:

«Զավախք» ժողովրդական շարժման կոչը՝ ուղղված Ախալքալաքի շրջանի ողջ աշխատավորությանը, տնտեսությունների և կազմակերպությունների ղեկավարներին, դպրոցների տնօրեններին, բանվորներին ու կոլտնտեսականներին, մտավորականության բոլոր ներկայացուցիչներին, 1991 թ., ք. Ախալքալաք (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Սարգսյան Հ. 2009, «Զավախք» պարբերականը (Վրաստանի հայ պարբերական մամուլի պատմությունից). – Հայոց հյուսիսային դարպասները. Զավախք, Լոռի (հոդվածների ժողովածու), գիրք 4, Երևան, «Միտք» վերլուծական կենտրոն, էջ 251–274:

Սարգսյան Վ. 2006, Սամցխե-Զավախք-Թռեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 376 էջ:

Սարգսեան Վ. 2018, Զաւախքը յետխորհրդային Վրաստանի վարչատարածքային բաժանման գործընթացներում.– «Հայկազեան հայագիտական հանդէս» (Պէյրութ), էջ 487–508:

Грузия, Самцхе-Джавахетия и «тюркское кольцо» вокруг Армении, 12. 01. 2004.– https://regnum.ru/article/202173 (դիտվել է 15. III. 2025):

Оганесян Э. 1991, Век борьбы. Очерк 100-летней истории дашнакской партии и национально-освободительной борьбы армянского народа, в двух томах. Мюнхен– Москва, изд. «Феникс», т. 1, 1–383 с., т. 2, 384–701 с.

Указ № 237, Глава Грузинского государства, 1994 г., 31 июля, г. Тбилиси (Վ. Սարգսյանի անձնական արխիվ).

REFERENCES

Azatamartik Mik’ayel Avagyany ch’i masnakts’el vrats’-abkhazakan bakhumnerin. merkats’vel e hert’akan adrbejanakan suty, 11. 02, 2019.– https://armen press.am/hy/ article/963867 (ditvel e 15. III. 2025 t.) (In Armenian).

Ardzanagrut’yun № 3, 19.05.1990, k’. Akhalk’alak’ (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian).

Banadzev «Javakhk’» zhoghovrdakan sharzhum kazmakerput’yan konferansi, ant’vakir (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian).

Khorhrdi ardzagank’y Avagyani kisandru shurj tsavalvats irarants’many, 11.02.2019.– https://jnews.ge/am/28375/#.XGF8jjMzbIU (ditvel e 15. III. 2025 t.) (In Armenian).

Kanonadrut'yun «Akhalk'alak'i «Verakaruts'man zhoghovrdakan sharzhum» ynkerut'yan», yndunvats «Verakaruts'um zhoghovrdakan sharzhum» ynkerut'yan koghmits' 01 hunisi, 1989 t'., grants'vats Akhalk'alak'i shrjkhorhrdi gortskomi ar 08. 09. 1989 t'. № 118 voroshmamb (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian).

Kanonadrut'yun «Javakhk'» hayrenakts'akan-baregortsakan miut'yan, yndunvats «Javakhk'» hayrenakts'akan-baregortsakan miut'yan hamaynk'ayin nerkayats'uts'-ich'neri himnadir zhoghovum, 20. 01. 1990 t'., k'. Yerevan (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian)

Ghazaryan V. 2013, Javakhk'i artsivnery Arts'akhi lernerum, Yerevan, «Hayastan» hrat., 184 ej (In Armenian).

Ghunkianos yergich' Karnets'i. 1995, Ghunkianosi yntsan, Yerevan, «Gir grots'», 110 ej (In Armenian).

Maghalyan V. 1997, Javakhk'i andranik parberakany. – «Handes Yerevani hamalsarani, gitainformats'ion lratu», № 1 (87), ej 81–85 (In Armenian).

Maghalyan V. 2009, Javakhk'i andranik parberakany. – Hayots' hyusisayin darpasnery. Javakhk', Lori (hodvatsneri zhoghovatsu), girk' 4, Yerevan, «Mitk'» verlutsakan kentron, ej 275–281 (In Armenian).

«Martik» (Yerevan), 2001, september, tiv 37 (In Armenian).

Melk'vonyan A. 1994, Erzrum. Erzrumi nahangi hay azgabnakch'ut'yuny ZHT' dari arajin yeresnamyakin (patmazhoghovrdagrakan usumnasirut'yun), Yerevan, «Hayastan», HH GAA hratarakch'ut'yunner, 180 ej (In Armenian).

Melk'vonyan A. 2003, Javakhk'y 19-rd darum yev 20-rd dari arajin k'arordin, Yerevan, «Zangak-97» hrat., 544 ej (In Armenian).

«Javakhk'», № 1, dektember, 1990, № 1, september, 1993, № 1, ogostos, 1994, № 2 (4), september, 1994, № 3 (5), hoktember, 1994, № 4 (6), noyember, 1994 (In Armenian).

«Javakhk'» zhoghovrdakan sharzhman koch'y, ughghvats Akhalk'alak'i shrjani voghj ashkhatavorut'yany, tntesut'yunneri yev kazmakerput'yunneri ghekavarnerin, dprots'neri tnorennerin, banvornerin u koltntesakannerin, mtavorakanut'yan bolor nerkayats'uts'ich'nerin, 1991 t'., k'. Akhalk'alak' (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian).

Sargsyan H. 2009, «Javakhk'» parberakany (Vrastani hay parberakan mamuli patmut'yunits'). – Hayots' hyusisayin darpasnery. Javakhk', Lori (hodvatsneri zhoghovatsu), girk' 4, Yerevan, «Mitk'» verlutsakan kentron, ej 251–274 (In Armenian).

Sargsyan V. 2006, Samts'khe-Javakhk'-T'reghk'y hay-vrats'akan harberut'yunneri holovuyt'um (1980-akan t't'. verj – 1990-akan t't'.), Yerevan, HH GAA patm. inst., 376 ej (In Armenian).

Sargsean V. 2018, Jawakhk'y yetkhorhrdayin Vrastani varch'ataratsk'ayin bazhanman gortsynt'ats'nerum.– «Haykazean hayagitakan handes» (Peyrut'), ej 487–508 (In Armenian).

Gruzia, Samtskhe-Javakhetia I «tyurkskoe koltso» vokrug Armenii, 12.01.2004, https://regnum.ru/article/202173 (ditvel e 15. III. 2025) (In Russian).

Oganesyan E. 1991, Vek borbi. Ocherk 100-letney istorii dashnakskoy partii i nacionalno-osvoboditelnoy borbi armqnskogo naroda, v dvukh tomakh, Myunkhen – Moskva, izd. «Feniks», t. 1, 1–383 s., t. 2, 384–701 s. (In Russian).

Ukaz N 237, Glava Gruzinskogo gosudarstva, 1994 g., 31 iyulya, g. Tbilisi (heghinaki antsnakan arkhiv) (In Russian).

ОТРАЖЕНИЕ ЖИЗНИ АРМЯН ДЖАВАХКА НА СТРАНИЦАХ ЕЖЕМЕСЯЧНОЙ ГАЗЕТЫ «ДЖАВАХК»
(Начало 1990-х годов)

ВАЭ САРКИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: распад СССР, Грузия, армяне Джавахка, народное движение «Джавахк», ежемесячная газета «Джавахк», поддержка Арцаха.

Газета «Джавахк», основанная народным движением «Джавахк», издавалась в Ахалкалаки с 1990 по 1998 год. Хотя и газета издавалась с нерегулярной периодичностью и ограниченным тиражом, но она служила платформой для распространения новых идей в общественно-политической жизни джавахкских армян в период распада СССР и в первые годы независимости Грузии. В газете издавались статьи и публикации о деятельности народного движения «Джавахк», об озвучиваемых ими проблемах, а также об общественно-политической, национальной, культурно-образовательной и духовной жизни армян Джавахка, очерки о жизни и деятельности выдающихся личностей. Помимо этого, газета освещала вопросы, связанные с армяно-грузинскими отношениями, с проблемами социального характера. В круг обсуждаемых вопросов входили благотворительность и церковное строительство, а также принимаемые грузинскими властями законы. Весьма ценными являются публикации, представляющие множество фактов о поддержке, оказываемой армянами Джавахка Арцаху. Предметом рассмотрения являются публикации газеты за 1990–1994 гг.

Ваэ Саркисян – к. и. н., научный сотрудник отдела истории диаспоры и армянских колоний Института истории НАН РА. Научные интересы: проблемы армянства Грузии, в частности Джавахка, различные вопросы армяно-грузинских отношений, проблемы коренных народов и национальных меньшинств Грузии. Автор 1 монографии и около 35 статей.
ORCID: 0009-0003-8437-5845. vsargsyan83@gmail.com

COVERAGE OF JAVAKHK ARMENIANS' LIFE ON THE PAGES OF "JAVAKHK" MONTLY NEWSPAPER
(In the early 1990s)

VAHE SARGSYAN

S u m m a r y

Keywords: Collapse of the USSR, Georgia, Javakhk Armenians, "Javakhk" people's movement, "Javakhk" monthly newspaper, support for Artsakh.

"Javakhk" newspaper, founded by the "Javakhk" people's movement, was published in Akhalkalaki from 1990 to 1998. Although the newspaper was published with irregular periodicity and in limited circulation, it served as a platform for spreading new ideas in the social and political life of the Javakhk Armenians in the period of the collapse of the USSR and the first years of the independence of Georgia. The newspaper put out articles and publications about the activities of the "Javakhk" people's movement, the problems they raised, as well as about the social and political, national, cultural, educational, and spiritual life of the Javakhk Armenians, essays about the life and activities of prominent individuals. In addition, the newspaper covered issues connected to the Armenian-Georgian relations and the problems of social character. The range of issues discussed included charity, church building and laws adopted by the Georgian authorities. The publications that presented many facts about the support provided by the Armenians of Javakhk to Artsakh are very valuable. The publications of the newspaper for 1990–1994 are subject of examination.

Vahe Sargsyan – Candidate of Historical Sciences, Researcher at the Department of History of Diaspora and Armenian Colonies of the Institute of History of NAS RA. Scientific interests: problems of the Armenians of Georgia, particularly of Javakhk, various issues on relations between Armenia and Georgia, problems of indigenous peoples and national minorities of Georgia. Author of 1 monograph and about 35 articles.
ORCID: 0009-0003-8437-5845. vsargsyan83@gmail.com